


269 - 42.

Հ ա յ ս կ ա զ ա յ ի ն պ ա տ մ ու թ ե ա ն ն շ ա ն ս ո ր մ ը շ ք ա ն ն ե ր ի ց մ է կ ն է Թ ո ն դ ր ա կ ե ց ի կ ա չ ու ա ծ ա լ ա ն դ ա ւ ո ր ն ե ր ի շ ա ր ժ մ ա ն ն ը լ չ ա ն լ ը լ ի ն ն ե ր օ ր դ գ ա ր ի ա ռ ա ջ ի ն կ ի ս ի ց մ ի ն չ ե տ ա ս ն և մ է կ ե ր օ ր դ գ ա ր ի ե ր կ ր ո ր դ կ է ս լ ը ե ր կ ու ա մ բ ո ղ ը գ ա ր ի ց ա ւ ե լ ի ։ Ա ր կ ե լ ք ո ւ մ ծ ա զ ա ծ ա ղ ա ն դ ն ե ր ի մ է լ մ ա ս ն ա ւ օ ր ու շ ա ղ ը ր ո ւ թ ե ա ն ա ր ժ ա ն ի ե ն Պ ա լ ի կ ե ա ն ն ե ր ի 1) և ս ր ա ն ց յ ա ջ ո ր դ ո ղ Թ ո ն դ ր ա կ ե ց ի ն ե ր ի 2) ա ղ ա ն դ ն ե ր ը ։ Ե ր կ ո ւ ս ն է լ ծ ա զ ա ծ և ս ն ա ծ ր ու ն հ ա լ ւ



Կ Ր Ո Ն Ա Կ Ա Ն

Ս Ե Ս Ն Ե Բ Տ Ե Ր Ե Կ Ե Ց Բ

(Ժ . Ռ Դ Պ Ա Բ Ա Բ Ի Ա Վ Ա Ը Ն Ա Բ)

Մ ե ր ա զ գ ա յ ի ն պ ա տ մ ու թ ե ա ն ն շ ա ն ս ո ր մ ը շ ք ա ն ն ե ր ի ց մ է կ ն է Թ ո ն դ ր ա կ ե ց ի կ ա չ ու ա ծ ա լ ա ն դ ա ւ ո ր ն ե ր ի շ ա ր ժ մ ա ն ն ը լ չ ա ն լ ը լ ի ն ն ե ր օ ր դ գ ա ր ի ա ռ ա ջ ի ն կ ի ս ի ց մ ի ն չ ե տ ա ս ն և մ է կ ե ր օ ր դ գ ա ր ի ե ր կ ր ո ր դ կ է ս լ ը ե ր կ ու ա մ բ ո ղ ը գ ա ր ի ց ա ւ ե լ ի ։ Ա ր կ ե լ ք ո ւ մ ծ ա զ ա ծ ա ղ ա ն դ ն ե ր ի մ է լ մ ա ս ն ա ւ օ ր ու շ ա ղ ը ր ո ւ թ ե ա ն ա ր ժ ա ն ի ե ն Պ ա լ ի կ ե ա ն ն ե ր ի 1) և ս ր ա ն ց յ ա ջ ո ր դ ո ղ Թ ո ն դ ր ա կ ե ց ի ն ե ր ի 2) ա ղ ա ն դ ն ե ր ը ։ Ե ր կ ո ւ ս ն է լ ծ ա զ ա ծ և ս ն ա ծ ր ու ն հ ա լ ւ

1) Պ ա լ ի կ ե ա ն ն ե ր ի ա ղ ա ն դ ը գ յ ո ւ մ ի ւ ն ու ն է ր գ ե ռ և և է դ գ ա ր ո ւ մ ։ Ժ . Ռ Դ գ ա ր ո ւ մ ։ տ ե ս Յ ո վ հ ա ն Օ ձ ն ե ց ու ձ ա ո ը ը ն դ դ է մ Պ ա լ ի կ ե ա ն ց և կ ա ն ն ն ե ր ը ։

կական հողի վրայ։ Աւշագրութեան արժանի է, որ հայկական մաքի որ և է արտադրութիւն երբէք չունեցաւ քիչ թէ շատ զգալի ազգեցութիւն հայ նեղ ազգային սահմաններից դուրս, այդ սահմանների մէջ հաշուելով և նորիկովկասը՝ Վրաստանն ու Ազուանքը, ուրիշ մի քանի մանր գրացի ցնդերի հետ։ Մինչդեռ միակ բացառութիւնը այս կանոնից, հայկական մտածողութեան միակ արտադրութիւնը՝ թէպէտ աղանդաւոր և հակառաղղափառական մտածողութիւն, որը դուրս եկաւ Հայաստանի սահմաններից, տարածուելով հեռուն՝ Փոքր-Ասիա, Միջադետք, Բալկաննեան թերակղզին, մասնաւորապէս Բուլղարիա, Միջին Եւրոպա, Հիւսիսային Իտալիա և հարաւային Ֆրանսիա, այդ միակ հայկականը, որ դարձաւ միջազգային և ահագին նշանակութիւն ստացաւ մարդկային ընդհանուր պատմութեան մէջ, այդ Թոնդրակեցիների աղանդն էր։

Մեր ազգային պատմութեան գասագրերում՝ այդ մասին գրեթէ ոչինչ չէ ասում։ Իրբև թէ ոչինչ էլ եղած չը լինէր։ Մինչդեռ առնուազն երկու դար շարունակ, եթէ ոչ աւելի, ամբողջ հայ ժողովուրդը բաժանուած էր երկու բանակի, Մտքերը վրդովուած էին, մի կողմից ներելի և աններելի միջոցներով պաշտպանուումէր ուղղափառութիւնը, ոչ միայն խօսքով, քարոզութեամբ, այլ և բռնի ուժով, գահիձներով, կախաղանով, խարանով, հրով ու ջրով, միւս կողմից ամենայն յամառութեամբ, առաջին դարերի քրիստոնեաներին վայել անվեհերութեամբ։ ամեն նեղութիւնների և հալածանքների յանձնառութեամբ քարոզւամ և ծաւալուումէր աղանդաւոր վարդապետութիւնը։ Պող Երարատից, Սմբատ, Սարգիս, Վազար, Թորոս, Արքայ, Կիւրեղ, Յակոբոս եպիսկոպոս, Կունծիկ արեղայ, Տիկին Հրանոյշ, Եշևան Վրգեռ, Տիկնայք Ախնի և Կամարայ, մի ոմն առասպելախառն Տիկին Մարէ, մի ուրիշը՝ Տիկին Շեթի) և ուրիշ բազմաթիւ անուններ, մնացել են մեզ իրբև այդ աղանդի նշանաւոր դործիչների անուններ։

2ը Նայելով Մագիստրոսի վիքուցուոյց խօսքերին և տմարդի հալածանքներին, մենք կարծումենք, որ ոչ թէ հալածանքները վերջ դրին այդ աղանդին Հայաստանում—ինչպէս յայտնի է այդ աղանդը շարունակեց իւր գոյութիւնը մինչև մեր օրերը Խնուսում և Ալեքսանդրապոլի գաւառում—այլ Թուրք—Թաթարական արշաւանքները ծածկեցին իրենց հեղեղի տակ, ինչպէս ամեն բան, նաև այդ աղանդը, որի հետեւողների մեծ մասը իրենց պաշտպան իշխանների հետ տեղափոխուեցին գէպի արևմուտք, Ասորիք, Փոքր-Ասիա և մասնաւորապէս Բուլղարիա։ Բուլղարիան դարձաւ

1) Այս երկու վերջին անունները հանած ենք մի շեռագրից, որը շուտով կը հրատարակենք։

այդ աղանդի երկրորդ հայրենիքը՝ ուր և Բողոմիլ քահանայի անունով աղանդը կոչուեց Բոգոմիլների աղանդ:

Միջին Եւրոպայում՝ Կաթարացիները շարունակեցին նոյն աղանդը, իսկ հարաւային Փրանսիայում՝ Ալբիգացիները (ալբիգուաները): Այս վերջինների պատմութիւնը հանրածանօթէ և բոլորից լաւ ուսումնասիրուածը):

Այսպիսով Ֆեֆորմացիայի և բոլոր բողոքական—աւետարանական եկեղեցիների բուն նախահայրերը և հիմնադիրները դուրս եկան Հայաստանից: Դրանց պատմութեան ուսումնասիրութիւնը անաշառութեամբ և առանց մոլեռանդութեան անհրաժեշտ է ոչ միայն մեր ուղղափառ Հայկական սեկեղեցու պատմութեան իրրե լրացուցիչ մասն, այլ աւելի ևս իրրե հայ հոգեւոր—մտաւոր կեանքի ինքնուրոյն արտայայտութիւն, մեծ և նշանաւոր իւր հետևանքներով:

Այստեղ մեր նպատակը չէ այդ նշանաւոր աղանդի վրայ նոյն իսկ հարեանցի ակնարկի ձգելլ: Այս մի քանի խօսքը անհրաժեշտ էր առաջիկայ մեր հրատարակած Անանիա Նարեկացու «Խռստովանութեան գրի» նշանակութիւնը ըմբռնել տալու համար մեր ընթերցողների մեծամասնութեանը: Մագիստրոսի, Լաստիվերտցու, Շնորհալու և ուրիշ զրողների մի քանի հարեանցի ակնարկներից և ընդհանուր ասացուածներից դուրս մենք ոչինչ չունեինք այս նշանաւոր աղանդի վերաբերութեամբ: «Բանալի ճշմարտութեանը» և Սինօդի 1837 թուի № 38 գործը ամենաթանկագին տեղեկութիւններն են պարունակում այս աղանդին վերաբերեալ որից և մասամբ օգտուեց պ. Երիցեանը Փորձում²⁾: Մեզ պակասում էր Անանիա Նարեկացու գլուխ—գործոց համարուած ընդգեմ Թոնդրակիցների գրած թուղթը, յիշուած զրեթէ հետագայ բոլոր զրողներից: Ահա այդ թուղթն է, որ այժմն առաջին անգամ հրատարակում ենք: Արդարացնում է արդեօք այդ գրուածքը այն բոլորը: Ինչ յուսացւում էր դրանից: —Պէտք է խոստովանել որ ո՞չ Գիտէինք որ Անանիա Կաթուղիկոսի հրամանով Անա-

1) Ալբիգացիները ամրոխից կոչւում էին Յօնգր, որ Բուլղար բառի աղջատուածն է և գործ էր ածւում հերետիկոսի նշանակութեամբ, այժմն էլ այդ բառը պահուած է ֆրանսերէն լեզուում և խիստ յիշոց է և տղեղ անարգակոն խօսք: Բոլորովին անհիմն է Եւրոպացի մի քանի գրողների կարծիքը, ի թիւս որոց և Լաւրլէյինը, որոնք կարծում են թէ ալբիգացիները տարածեցին իրենց աղանդը Բուլղարիայում և Բունիայում: մինչդեռ շարժմունքը եղել է բոլորովին հակառակ ուղղութեամբ՝ արևելքից դեպի արևմուտք: Թիրեւս մեզ յաջողուի երբ և իցէ այս նշանաւոր աղանդի ծագման և ծաւալման մասին գրել մանրամասն ուսումնասիրութիւն:

2) Տես Փորձ 1880 թ. № X եր. 91—130: Տես Նաև Զամչեան Պատմ: Հայոց Բ. հատոր, եր. 884—895:

նիա Նարեկացին զրել է Թոնդրակեցիների աղանդի մասին, սպառում էինք շատ տեղեկութիւններ, բայց դրանցից և ոչ մէկը չենք գտնում։ Բանից դուրս է գալիս, որ այդ թուղթը աւելի անձնապաշտպանութեան թուղթ է։ Գրա մէջ Անանիան անիծումէ Թոնդրակեցիներին, որպէս զի ինքը Թոնդրակեցի Համարուի, հարկ է գատում դնել իւր հաւատամքը որպէս զի երեխ իւր ուղղափառութիւնը։ Տարօրինակ և սրտաշարժ տեսարան։ Հոյոց ամենամեծ վարդապետներից մէկը, Նարեկեան դպրոցի հիմնադիրը, յօր ծերութեան, հիւանդութեան անկողնում մեղադրուում է աղանդաւորութեան մէջ նոյն իսկ իւր ընկերակից կրօնաւորից, որի կեղտոտ անունը Ընծուել է պատմութեան էջերից և մեզ չէ հասել։ Անանիա Կաթուղիկոսի ժամանակները կրօնական յուղմունքը գագաթնակէտին էր հասել, ամբողջ գաւառներ և նահանգներ, ինչպէս Սիւնիքը, իրենց եպիսկոպոսներով անցնում էին հալածուած, խոշտանդուած աղանդաւորների կողմը։ Թագաւորում էր հալածանքն ու մոլեռանդութիւնը։ Քսուների և մատնիչների համար լաւ առպարէզ էր բացուած։ Ամբաստանւում էին երրեմն ամենամքուր և անմեղ անձնաւորութիւններ, որոնց միակ յանցանքը մոլեռանդութեան պակասութիւնն էր, և հալածանքներին չըհամակրելլ։

Եւ ահա թէ ինչ դառն և արգարացի ցասմամբ լի խօսքերով է դառնում Անանիա Նարեկացին իւր անուանակից, ընկերակից, Հայրենակից Անանիա Կաթուղիկոսին, որն իրենից ուղղափառ խոստովանութեան գիր էր պահանջում և անէծք Թոնդրակեցիներին։ Եւ իսկապէս այս առաջին անգամ լոյս տեսնող թղթի ամենանշանաւոր մասը այդ սրտաշարժ, զգացուած յառաջարանն է և մասամբ էլ նոյն ոգուով գրուած վերջարանը։ Այդ մի քանի տողերը ամբողջ դարի պատկերն են բաց անում մեր առաջ։

Մի քանի խօսք էլ այս գրուածքի հանգամանքների վերաբերութեամբ Մինչև օրս այս գրուածքը համարում էր կորած, թէև գրուածքի վերնագիրը յայտնի էր և սխալմամբ վերագրուում էր Անանիա Շիրակացուն, որովհետեւ այս գրութեան հետ կից յիշւում էր և « Բացայայտութիւն թուոց » մի ուրիշ գրութիւն (։)։ Այդ գրութիւնը Անանիայի հոյոց վարդապետի սակս բացայայտութեան թուոց վերնագրով կայ և մեր ձեռագրում և առանց որ և է կասկածի վերաբերում է Անանիա Նարեկացու

(.) « Գըշագրաց ցուցակաց մէջ ուրիշ երկասիրութիւն մալ կտեսնենք՝ Անանիայի անուամքը։ » Անանիայի գիր խոստովանութեան յաղագս սուտ կարծեաց ի վերայ նորա, և բացայայտութիւն թուոց ։ Այս վերջին խօսքը հաւանական կերեցնէ մեզ Շիրակունոյն ընծայել զայն, և ոչ ուրիշ նոյն անունը կրող վարդապետի մը ։ Հայկ. Հին Պարութիւն, Զարբան.

գրչին։ Այստեղ տեղը չէ ապացոյցներ բերել մեր այս կարծիքին, սակայն այսչափն ասենք, որ այդ գրուածքը թուերի խորհրդական նշանակութեանց բացատրութեանն է նուիրուած և Անանիայի աշակերտը Գրիգոր Նարեկացին շատ յաճախ գրուածքների մէջ խօսում է իւր վարդապետի հետեւութեամբ թուերի խորհրդաւորութեան մասին։ Այս անտիպ գըրուածքի սկզբնաւորութիւնն է։ «Կամ եղե ինձ սակաւ ինչ աշխատասիրել սակս թուոց բացայայտութեան ի բազմաց անտես եղեալ . . .» իսկ վերջաւորութիւնն է՝ «և որպէս անցեալ ամն հնացեալ վախճան առնու, և վերջին օրն անցեալ ամին կատարումն և նորոյ ամին սկիզբն՝ ի միջոցի կալով ունի մասն ինչ ի հնոյն և հաղորդութիւն ունի ընդ նորոյն ամին՝ սկիզբն գոլով։» Այս գրուածքը կրկին անգամ՝ ընդարձակ է Անանիայի «խոստովանութեան գրից»։

Մեր ձեռքում եղած ձեռագիրը թէե առանց համարի, կամ համարը եղծուած, անկասկած տպագրեալ Մայր ցուցակի № 499-է, Զգոն գըրքից 3-ը։

Ձեռագիրը կաշեկազմ է, 25×19 հարիւրամետր, կոկած բամբակեայ թուղթ, բոլորագիր, մեծ մասամբ երկիջեան, տեղ տեղ միապաղաղ տողերով, բովանդակութիւնը տես Մայր-ցուցակ, թերթ 527=1054 երես, գրութիւնը զիւրընթեանելի և պարզ լաւ պահուած, տողերի թիւը—30, էջերի մեծութիւնը 19×6 հ. մ. գրիչ՝ Ա.աղար քարտուղար, տեղի՝ Ագուլեաց Թովմայ Առաքելոյ վանք, թուական՝ Թօն։ ըստ խնդրանաց Գրիգոր արեղայի։ (յիշատակարանը նօտր գիր և նոր գրութիւն)։

Ձեռագիրը նոյնութեամբ տպում էնք, և առ խառն ուղղագրութիւնը միօրինակութեան համար ամեն տեղ վերածելով հնագոյն ձեին։ Ակներե աղջատուած բառերը ուղղում ենք բնագրում սակայն զծի տակ գնելով ձշութեամբ ձեռագրի ընթերցուածը։

ՄԻԱԲԱՆ.